2. ՄԱՀՄՈՒԴ ԵՎ ՄԱՀԲՈՒԲ

Թուջար մարթ մը կէղի, անուն Ֆրիկման։ Ժամանակ օր կիգա՝ էդ Ֆրիկման կմեռնի։ Կմնա ուրին էրկու խատ տղա։ էդ տղեկներ մամ կդնա վարժատուն կարդան։

Մեկ օր հ՚իրիկուն վարժատնեն կիգան, կտեսնան չորս տղա, ուրանց պապու գերեզմնի վրեն նստած կիլան։

Մահմուդ ուր ախբոր կասա,— էդիկ մեր պապու գերեզման ա, էդ տղեք էդ տեխ հ՚որի՞ կիլան։

Կէրթա կասա.— էգի մեր պապու գերեզման ա, ձըր պապու գերեզման գտեք, լացեք վրեն։

Կըսա.— Ախբեր, օղորթ ա, քու պապու գերեզման ա, ամա մեր պապ լէ էղեր ա։ Ձեր պապ օր մեռե, մեր իդարեն էլ չէզի։ Քու պապ զմղի կպահեր։

Մահմուդ կասա.— Օր իմ պապ ձըզի կպահեր, ես լէ կպախիմ։

Մեկել ախբեր կասա.— Ախբեր վաղն արի։

Մահմուդ կասա.— Չէ՛, իմ պապու իրք չըմ կոտրի, ես կպախիմ չուր օրն մեռնելուն։

Մեկ ժամանակ մի կպախա էդ չորս տղեն։ Օր չորս մարթ, օր տաս մարթ կբերին, կկերցուն էդ թովլաթ, Մահմուդի խելք գլխուց կառին։ Էնպես իդոր մալ կուտին, օր Մահմուդ կէնին փարսակ (փարռակ) ավուր հացի կարոտ։

Ախպեր ըսեց.— Մահմուդ, իմա՞լ է, ես ասի դու անկաջ չէ-
րիր, խաբեցին, մեր կա չկան պրծան։

Մահմուդի մամ ախր հարուստի կնիկ էր, ուր խոսք գեչրար (անցնող) էր, շապիկ կտաներ ծախեր, բան ու ման կտաներ ծա-
խեր, օրական խաց կգներ բերեր։

Էնպես էղավ Մահմուդ, էն չորս ախպրտանք թողեցին գնացին։ Մահմուդն էր գնաց աշճի խանին, տեսավ ուր չորս ախբեր էն տեխն ին։ Նստած են հ'ոտի՝ կեր ու խում կէնին։ Տեսավ ուրախ-
ցավ։ «Օխ,— ըսավ,— իմ ախբրտիք հ'ոդի ին, քիչմ խաց, կերակուլ տան ուտիմ»։ Էդ մարդիկ օր տեսան Մահմուդ էկավ, էլան չորս լէ թափան վրեն, էնպե՛ս զարկեցին։

Ըսին.— Հա՛յ քու ֆլան բեֆան, մենք դոր, դու դոր։ — Զար-
կեցին, ջարդեցին, դուրս էրեցին։ Մահմուդ թողեց գնաց ուր տուն լալման։

Ախբեր ըսեց.— Չէ՞, ես հ'են օր ասեցի, լավ էրին քզի ջարդե-
ցին։

Մնաց։ Ժամանակըմ հ'ընցավ։ Մահմուդ մեծըցավ, էղավ բա-
բաիգիթ մարթ։

Էդ էրկրի թագավոր ըսեց.— Վո՛ն օր էրթա Ջին—Մաչինա թագավորի ձին ընձի համար բերե, ես իմ ախչիկ Գոլշան տամ ուրին. անուն ընձի, թագավորութեն՝ ուրին։

Օր դալալ տվեց դանչել, սկի մարթ լսող չէղավ։

Մահմուդ գնաց թագավորին ըսեց.— Ես կէրթամ բերիմ։

Մամ խասկցավ, ըսեց.— Մ'էրթա, դու խամ տղա իս, խուր-
բաթ տեղ ա, չկարնաս բերիս։

Մամուն անկաջ չէրեց։ Գնաց խաբար տվեց թագավորին, ըսեց.

— Թագավոր, դու սաղ կենաս, ես կէրթամ, դոր հ'ուզիս, իմ գլուխ լէ տամ դուս, պտի էրթամ քու խոսք կատարիմ։

Թագավոր ընթունեց, զՄահմուդ շատ մեծըցուց, էրաց հ'ըմ-
նուն քլխավոր։

Ըսեց.— Ինչ կուտիս, կթափիս, կկոտրիս հ'ըմեն դու։

Խոսք գնաց հասավ էն չորս ախբոր, օր Մահմուդ մեծացեր ա, էղեր ա հ'ըմնու քլխավոր։

Չորս ախպեր էկան զուրանք թալեցին Մահմուդի օտաց։

Ասաց.— Ես մոռցե՞ր իմ աշճի խանի (ճաշարան) ի՞նչ էրե-
ցիք իմ քլոխ։ — Բռնեց չորսին լէ սպանեց էդ տեխ։

Դարձավ մոր մոտ, ասաց,— Ախր, մենք կէրթանք դու ջոջ ես. մզի խրատ մի տուր։

Ըսեց.— Լաո՛, ես խրատ չըմ գինա, ես կնիկ ղավակ իմ։ Ջարեն մացե աստված, հ՝ետև աստված, ձըր պապուն ախբրագիր մը կա, խրատ տվող կա, էն ա։

Մնաց հ՝իրկուն, կազ մորթեց, պատիվ էրաց, առավ քնաց։ Ջուար տվեցին, օր քու ախպոր կնիկ, քու ախպոր տղեներ էկան։

Օր լսեց, ուրախացավ, ըսեց.— Ղանչեք էստեխ թ՝իգա։

Ղանչեցին բերեցին։

Ըսավ.— Բարի իս էկե, ախպերկին, էսքան ժամանակ ա չէկեր իս, իմա՞լ իս, ի՞նչ կա։

Ըսեց.— Թագավոր դրի իմ տղի վրեն, կըսա. «Պտի էրթաս Ջին—Մաչինա թագավորի Բեչան լավ ձին բերես»։

Ըսեց.— Իմ աչքեր մատուս ա, ըդի շատ զոռ բան ա, հիսուն ճամբախ ա, դե իմ ախպոր խաթրին ես կէրթամ։ Մահմուդ ըսավ.— Դու էրեխա իս, չըս կըրնա էրթա։ Դու կուզիս օր էրթաս, մե մահավե մի շինա, օր դնիս ձիու վրա, մեկ աչք ես նստիմ, մեկ՝ դու։ Ես չըմ տեսնի ճամփներ, օր քնացինս ֆլան չոլ, դու ասա քայ մը կա, նշան մը կա, ես կիմանամ ի՞նչ տեղ ա, թարիֆ կէնիմ։ Գեղ ռաստ կիգա քղի՝ ըսա հըմլա գեղըմ ա։ Գեղ կընցնիս, կէրթաս ջուր ռաստ կիգա, ծով ռաստ կիգա, սար-ձոր ռաստ կիգա։

Մահմուդ դարձավ գնաց թագավորի մոտ, ըսավ.

— Ես կուզիմ քինե էսքան ղոշին զորք, կուզիմ քգնե մեկ լավ ձի մի, մահավե (պատգարակ) մի օր դնինք ձիու վրա, էրթանք։

Բերեցին հ՝ըմեն հազրեցին, պավական փարա դրեցին Մահմուդի հ՝առեջ։ Մահմուդ ղանչեց ուր աստված, մատուս խորոխպոր հետ ինկավ ճամբախ։ Թագավոր չըգինա ուրիշ մարթ կա խետ, գինա Մահմուդ մենակ ա։

Խորոխպոր թարիֆ էնելով չոլ, գեղ, սար, ձոր, ջուր, ծով հ՝ընցան, գնացին էդ մարդու քաղաք։ Ղոշուն էդտեղ չադրներ զարկավ, քաղաքի մեկ կուշտ կանավ։ Մահմուդն էր էդ տեխ մտածեց։ Մեկ էլ տեսավ մե լավ ձի մի առան էկան։ Ջին մե մարթմ բռնե բերե վըր ջրուն։

Մահմուդ կեցավ ըսավ. «Էդ ձին չէղի՞»։

Մահմուդ էլավ գնաց տեսավ զձին, տեսավ օր ամպերու հետ կխաղա։ Էլ թարիֆ չէղի։

Խարցուց էդ մարթու մոտեն.— Էդ ի՞նչ մարդու ձի ա։

Ըսավ.— Դու քո՞ռ իս, չըս տե՞սնա ինչ մարդու ձի ա։ Կարելի ա դու կարիբ մարդ իս, օր չըս ճանչնա էս ձին։

— Ախպեր,— ըսավ,— ես կարիբ իմ, ընչի՞ կըռըկիս, էսպես ձի մի ես թու մարթու մը մոտ չը տեսեր իմ։

— Վնաս չունի,— ըսավ,— էսա թագավորի ձին ա, Բեջան ա։

Ասաց.— Թագավորի էն լավ ձի՞ն ա։

Թախթիր առավ օր անպատճառ էն ձին ա։

Ըսավ.— Բմբարաք էղի տիբուն։

Դարձավ էկավ ուր տեղ, ղոշունի մեջ։ Նստավ մեկ նամակ մի քրեց, ըսավ.— «Ֆլան մարդ էկիր ա քու ձիուն, անուշութենո՞վ կիտաս, յա՞ գոռով»։

Թուղթ տվեց էրկու մարդու ձեռ, տարան թագավորին։ Թագավոր աչքեց օր նամակ կարդաց, շատ մառախ էրաց թագավոր, ըսավ.

— Էս նամակ բերեր իս, դու էլի գնա քու տեխ։
Ես էլ մարդ ունինք, ղանչինք մալհազա կէնինք։

Էդ էրկու մարդ հ'ելան էկան։ Թագավոր ղանչեց ուր ոջալքբար բերեց, ըսաց.

— Ֆլան մարդ էկեր հ'ետև ձիուն, դու ի՞նչ կըսիք։ Անուշութենո՞վ տանք էրթա, թե՞ կռվով։ Ձեր խելք ի՞նչ կկտրա։

Ըսին.— Էղի էկեր ա ձին տանի, հըլրաթ (անշուշտ) էտոր խունար (հնար) մը կա, օր էկեր ա։ Մենք կռվով չկրնանք ըդոր հաղթինք, էդ մարդուն խաբար կիտաս, թե գյուլաշ ունի՞ս, մեր գյուլաշի (մենամարտիկ) խեդ կպի, թե էդպիսով հաղթիս, ձին չի տաս։

Պատասխան տվեցին Մահմուդին, թե. «Գյուլաշ մի կուղինք քըղնե։ Թի քու գյուլաշ մըր գյուլաշին հաղթեց, առանց խոսքի ձին անուշութենով առ տար, թե չհաղթեց, քու գլոխ կզարկենք»։

Նամակ առավ կարդաց Մահմուդ, ըսեց.

— Շատ բարի, թագավորին ասեք մըր գյուլաշ հազըր ա։

Էնոնք գնացին, Մահմուդ մտածեց՝ «է, գյուլաշ որդի՞են Մահմուդին»։ Հ'ելավ գնաց ուր մատուս խորոխպոր մոտ, ըսեց.

— Խորոխպեր, հըմլա փամի կա։ Դու ի՞նչ կըսիս։

Ըսեց.— Մահմուդ, լաո՛, ըդի շատ զոռ բան ա։ Դու էդ տեսակ գյուլաշշի ունի՞ս, մըջ ձգի։

Ըսավ.— Գյուլաշշի չունիմ։ Ես պտի էրթամ գյուլաշի, ղանչի աստված կհասնիմ, թը աստված ընձի կիտա, կիտա, թը չտվեց՝ ընչ կելնի, թ'ելնի։

Ըսեց.— Մահմուդ, ըդոր գյուլաշշին մարթ չթորկեր ա, որ մարդ օր էկեր ա, քլուխ զարկեր ա։ Ես մէ խրատ մի կիտամ քըզի, չէղնի մոռնաս։ Էդ գյուլաշշին ախչիկ ա, դու գիտե՞ս ինչպես կէնիս, ըդի էնպես լիբաս (հագուստ) է խագի, օրտա պաղի նման, ինչքան

3—1086

քու ձեռ թալիս, չըբռնա։ Էնիկ կզվռնա կիգա մեյդան կուզա, դու հ՚ուհու չխլվըլաս քու տեխեն, կմնաս օրթա տեխ, էտ օր շատ կզըվռնա, դու ժաժ չի գաս, օր էկավ խասավ քզի, դու մեկ բանով կհաղթիս զէնի։ Էդ բանով՝ ի՞նչ բանով կհաղթիս։ Դու քու ֆառաս բերեցիր, ձեռ զարկիր էտոր ծծեր, կհաղթիս, էդի ախչիկ ա։ Օրտա ծծեր բռնեցիր, դիր գետին, էն կըսա. «Մահմուդ, թող, դու ընձի. ես քըզի»։ Դե էլի քու աստված զանչա։ու գնա, իմ խրատ չէղի մոռնաս։

Նամակ գրեց, տվեց էրկու մարդ տարան թագավորին։

Ըսեց.— Լուսումտին անպատճառ թ՚իգան մեյդան կանին, գյուլաշչին հազր է։

Լուսուն օր աղոթրան բացվավ վըր հազրներուն, վըր քըզի, էտանց վերեն, էլան գնացին գյուլաշի մեյդան։ Տեսավ օրտա քաղաք մարդ չը մացե, բիրդան էկած թամաշեն։ Էկավ հ՚ինք կանավ մեյդան, թագավորի գյուլաշչին էն դեհեն էկավ։ Տեսավ օր Մահմուդ կանուկ ա, մեյդան կուզա։ Էկավ ձեռք թողկաթ էրաց, դարձավ ուր տեխ, ուր շորեր խանեց, թաժա լիրաս խագավ։ Մահմուդ տեսավ օր լիրաս խագավ՝ ինչ օր պաղի պես փելք կիտա։ Էկան ու մեկ էլ ձեռք տվին իրարու, Մահմուդ ու էդ գյուլաշչին։

Ըսեց.— Մահմուդ, զվըռնացի։

Ըսեց.— Դո՛ւ զվըռնացի, ես կզվըռնամ։

Էդի քնաց ու էկավ, Մահմուդ թաժա էրեխա, չտեսի էդ բաներ, կվախենա։ Իտա գյուլաշչին էր, զվրռնա՛ց, զվրռնա՛ց, իդա ուր տեխեն ժաժ չիգա։

Ըսեց.— Մահմո՛ւդ, ես էկա քզի, էլ չըսիս ֆլան գյուլաշչին բերախտուութեն էրաց, քու թախմին էրա։

Ըսեց. —Արի՛, աստված յան ընձի տա, յան քըզի։

Էկավ զարկեց, խասան իրար։ Մահմուդ դոր կթալա ձեռ, չպռնա։ Մահմուդ կղովաթլի էր, ձեռ զարկեց, ծծեր պռնեց։

Ծծեր օր պռնեց, ըսեց.— Մահմո՛ւդ, թող ես քզի, մեղա աստրծու, ես հաղթա։

Ըսեց.— Չէ՛, անխնար ա, քզի սլտի զարկիմ գետին, սպանիմ։ Մահմուդ անկաչ չէրաց, ղանչեց աստված, ըսեց. «Ցա, դու խասիս ընձի»։ Զարկելու խետ գետին, ղանչեց.

— Մահմո՛ւդ ընձի զայ մ՚էնի, ես Մահբուր ախչիկն իմ, դու ընձի՛, ես քզի։

Թողեց, ախչիկ էլավ քնաց էդ շորեր թափեց, խագավ ուր պատվական շորեր, էկավ Մահմուդի քով, ըսավ.

— Ես ախտ ենք էրի, ո՞ն օր ընձի հաղթեր՝ ես էն առինք։

Թագավորն է տեսավ, համ ուր ձին գնաց, համ ուր ախչիկ։

Էլան, ձեռ թալեցին իրար թևին, գացին Մահմուդի տեխ. գացին նստան։ Ախչիկն ըսեց.

— Արի թուղթ խաղանք, մըր քեֆ էնինք,

Նստան ուրանց թուղթ խաղցան, քեֆ էրին։ Իտոնք թըխ քեֆ էնին, դառնանք թագավորի վրեն։

Թագավոր ըսավ.— Էրթամ իմ ախչիկ տեսնամ, կիգա՞, չի՞ դա, կանա (գոնե) իմ ախչիկ չթորկիմ էրթա։

Ախչկա էրես թըխ թագավորի քաղաքն ա, Մահբուբ տեսավ օր ուր խերն էկավ, մոտեցավ ուրին, ինք ուր տեխ փոխեց, հետև էրաց թ'ուր պապ։

Պապ տեսավ օր չուր մկա հառեջն էր թրխ պապ, մկա զվրոնաց, հետև էրաց, ասաց. «Հե՜յ վախ, ախչիկ լէ գնաց, իմ կյանք էրթեր, իմ դոլվաթ էրթեր, իմ ախչիկ, յան իմ ձին չէրթեր, մկա էրկուս լէ քացին, հե՜յ վախ, հաղար վախ, բոշ ա, ես կդառնամ կէրթամ»։

Քնաց։ Ձին լէ ճամբեց Մահմուդին, ախչիկ լէ քնաց։ Էկավ մե շաբաթ մը քաղաքի մեջ քեֆ էրաց։ Ժամանակ օր էկավ, քնաց թագավորի մոտ խաթըր (հրաժեշտ) առավ, դարձավ ուր չադրներ, էնքան մալ թագավոր բաշխեց ուրին, ըսաց.

— Գնա՜, որդի, աստված քզի հետ։

Շատ էկավ, քիչ էկավ, թե տասն օր, թե ամիս մի էկավ ուր պապու քաղաք հ'ելավ դուրս։

Մուժդա տարան թագավորին, թե Մահմուդն էկավ, սաղ սալամաթ, ձին բերավ, լավ ախչիկմ լէ ուրին բերավ։

Թագավորն էր, էկավ տեսավ, օր Մահմուդի նշանլուն մեկ փարիմ ա, նման չճարվի։ Ձին օր տեսավ, էսպես հրեղեն ձի ա, խաբիր մարդ չկարնա զավթա (ղսպել)։

Շատ ուրախցավ թագավոր, ղանչեց Մահմուդ, առավ գնաց։

Ըսաց.— Թագավարութինի անուն ընձի, էրկիր բիրադի քզի, մնացած դու գիտես՝ ինչպես գիտես էրա։

Մահմուդն էր ուրախցավ։ Թագավոր բերեց յոթ դհոլ, յոթ զուռնա, յոթ օր գիշեր ցերեկ խարսնիք բռնեց։

Էն խասավ ուր մրազին, դու լէ խասնիս քու մրազին։

Թագավոր լավ սենյակ մի տվեց Մահմուդին, ըսեց.

—Աշխարք մամլաքաթ քզի, ինչ գիտես՝ էրա։

Ինչ մարդ օր գեր գանգտի, Մահմուդի մոտ կէրթեր։

Մնաց էդ տեխ։ Մահմուդ ուրիշ բան չուտեր, խավքու միս մի-նակ ուզե։ Նեճիր կէրթա, ամեն օր ըտոր ըֆքարն էդ է, առավոտ էրթա հ՝իրկուն իդա։ Ամեն օր կէրթեր։ Տարի մը քշեց, ժամանակ մի քշեց։ Մեկ անգամ քնաց նեճիր չընկավ ձեռ։ Գիշեր տվեց վրեն գնաց, քշեց կարիբ խոզի մեջ։ Տեսավ օր իրեք դև էդ տեխն ա։ Ինք ու դևեր առան հ՝իբար ելովին։ Շատ կովան, քիչ կովան, մինչև մութ տվեց, պառկավ ըդտեխ, ըսեց. «Զուր ես էս դևեր չսպանիմ, էս տեխեն չըմ էրթա»։

Գիշեր օր տվեց վրեն, կո ղաբիր էրկիր, պառկավ էդ տեխ մինչև լուսցավ։ Աչքեց օր նը դև, նը հալ, նը բան։ Ըսեց. «Ես Մահ-մուդ էղնիմ, էդ դևեր իմ ձեռնեն պուծնին էրթան, չարա չկա, ես պտի էրթամ, յան իմ քլոխ պտի տամ դուս, յան էն դևեր պռնիմ սպանիմ»։

Մահմուդն էր ընկավ չոլ, ինք լէ չգինա ո՞րտեխ կէրթա։ Շատ քնաց, քիչ քնաց, էն աստված գինա։ Քնաց տեսավ բոյարի (խո-պան) տեխ մի, չայիր չիման, բաղ բաղչա։ Աչքեց օր տեսավ մեկ պիտվական սարե մի, չուտիս չխմիս էդ սարեն թամաշա էնիս։ Ըսաց. «Ես Մահմուդն իմ, պտի էրթամ տեսնամ էս ի՞նչ մարդու տուն ա»։

Ուր ձին կապեց բաղի մեջ՝ ծառ մի։ Գնաց իջավ տեսավ օր քառսուն ոտ նարդիվան (սանդուխ) կա, գնաց էդ շինութենի մեջ, տեսավ օր ախչիկ մի, ախչիկ մ՝ըսեր, լուսընկի պէս փեյք կիտա։ Ախչիկն օր զէդ տղեն տեսավ, մուխ գլխեն թալեց, ըսավ.

— Ա՜յ տղա, քու գլխուն արևո՞ւն մեռնիմ, իսավքն ուր թևով, սցն ուր ելոռտով էդ տեխրանք չի դեր, դու իմա՞լ էկար։ Դըրցի, քու ճամփու խետ քնա։ Դև օր տեսնա քու ջոջ փերթ քու անկաջ կթողնա։ Քառսուն ավուր ճամբախ, դևեքներու հ՝ախուն մաոդ էրթցողդալացողչկա հեչ։

Ըսեց.— Աղչի՜, մի վախնա, ես դևեքներու հ՝ապով իմ էկի։

Ըսեց.— Էնոնք իրեք ախպեր ին, մեկ իդա ա։

Ըսեց.— Դու մի վախենա, ճամբախ ղհո՞րվե, կիդա, դու սա-լըխ էրա, ես կէրթամ, թըղ ընձի սպանա։

Ըսեց.— Է՜, էնա ճամբախ կտեսնիս, էնոր ճամբախն ա։

Ըսեց.— Դե՜, մացիր բարով, ես կէրթամ, յան աստված ընձի տա, յան դևուն։

Մահմուդ խեծավ ուր ձին, ղանչեց ուր աստված, քնաց։ Քնաց ախչկա ասած տեխ կանավ ճամբխի վրեն։

Խրամգախ ա, հ՝իրիկվան դեն ա, տեսավ ի՞նչ տեսավ, թոզ ու

դուման տվի դաշտ կիգա։ Մեկ ծառ մը քաշեր ա, ու մեկ ճղեն խը-զար տեսակ խավք կախեր ա։ Մահմուդն օր տեսավ էդի, բոռաց.

— Է՛ խողածին, էն ա քսան տարի, օր իսնի միս իմ ակռի տակ. չընկի։

Մահմուդ բոռաց.— Դու կեր, նոր շըքրի (փառք տուր)։

Դև ըսեց.— Դո՞ւ կղարկիս հ'առեջ, թե՞ ես ղարկիմ։

Ըսեց.— Դոր քումն ա, դու զար։

Մահմուդ կանավ, էդի գուրզ մի զանավ Մահմուդին։ Մահ-մուդ տեսավ թոզ ու դուման տվեց գետին, թոզի մեջ չերևա։ Թոզ ու դուման բացվավ։

Դև ըսավ.— Դու սա՞ղ իս։

Ըսավ.— Փա՛ռք աստծու, ես սաղ իմ, դոր իմ չէ՞։

Ըսավ.— Դոր քումն ա, զա՛ր,։

Մահմուդ մեկ գուրզ մի թալեց։

Ըսավ.— Մեկ լէ զար։

—Չէ՛— ըսավ,— մեկ ա, էրկու չէղի։

Աշեց օր դև ելիծավ, թըմավ։ Իշավ ձիուց, էդոր էրկու անկաջ կտրեց, դրեց կոյդան։ Էլավ ուր ձին խեծավ էկավ։ Էկավ մոտ ախ-չիկ, ուրախցավ։ Գնաց խագավ մեկ պիտվական շորեր էկավ։ Տեխ թալեց, օր մեկ տեխ պառկին։

Մահմուդ ըսաց.— Չէ, ես մուրազ ունիմ, դու իմ քուրս իս։ Քզի էնպես մարդու պտի տանիմ, օր քըն զձի էլ խորոտ։

Նստան էդ տեխ, կերան, խմեցին։ Լուսուն օր բացվավ, ախ-չրկան ըսաց.

— Էն մեկել դևի ճամբախ շանց (նշան) տուր ընձի, ես էրթամ։

Ըսավ.— Դևի ճամբախ էնա, ա, համա դեմ էրա քնա էնոր սարեն։

Էլավ խաթըր առավ մեծ ախչկա մոտեն, գնաց. գնաց դեմի մեկել դևին։ Գնաց էն դևի պիտվական քոչք ու սարի հ'առեջ, ձին կապեց բաղ, գնաց տեսավ օր ախչիկ մի, չուտիս, չխմիս էդ ախ-չիկ սեյր էնիս։

Ախչկա մոտեն խարցուց, ըսեց.— Ախչի, դու իմա՞լ իք էկի հ'ողի։

Ըսավ.— Մի զոռով բերավ։

Ախչիկ դևու ճամբախ շանց տվեց, Մահմուդ գնաց միշնեկ դևի ճամբախ պախեց։

Ցիրիկվան պահին դև էկավ, Մահմուդ զարկեց էդ լէ սպանեց։ Անկջներ կտրեց, դրեց կոյդան, էկավ միշնեկ ախչկա մոտ, միշնեկ ախչիկ նշանեց ուր ախպոր խամար։

Լուսուն հ'ելավ գնաց դեմի պստիկ դռին, էն լէ էն տեսակ ըսպանեց, ախչիկ նշանեց ուրին համար։ Հ'իրիկուն պառկավ ծոց։ Լուսուն պստիկ ախչիկ առավ էկավ միջնեկ ախչկա վրեն, դոր գընաց մեծ ախչիկ լէ առավ իրեքն մեկնան, առավ էկավ ուր պապու քաղաք էլավ դուս։

Գնաց ուր կնկան մոտ, ուր մամուն, ուրիշ օր կնիկ կելներ ուր ձիու հ'առեջ, տեսավ օր էն օր չէկավ։

Մամու մոտեն խարցուց.— Մամ,— ըսավ,— քու խա՞րս հ'ուր ա, չ երևա։

Ըսեց.— Լաո, վոլա քընե պախիմ, աստծուց ի՞նչ պախիմ, քու կնիկ ըսկե քացեր ա։

Ըսեց.— Հ'էսօր քանի՞ օր ա քացեր ա։

Ըսեց.— Հ'էսօր իրեք օր, օր քացեր ա։

Ըսեց.— Պտի էտա խաց ընձի խարամ էղի, չուր ես իմ կնիկ գտնիմ բերիմ։

Հ'ելավ, ուր աստված ղանչեց, խեծավ ուր ձին, ինկավ ճամբախ ու գնաց։

Էլ չըմգինա քանի օր քնաց, քնաց Մուղանա սար խասավ, տեսավ օր Մահբուբ խեծած ա ձին, կէրթա, սկի հ'ետև չաչքա։ Դու մըսեր էտոր սեհր էրած ա, ալիշ խանած ա։ Գնաց խասավ, Մահբուբ բոռաց.

— Մի գար, քզի կղարկիմ, կսպանիմ.

Ըդի անկաջ չէրաց, ձեռ թալեց վզով օր դարցուցեր, Մահբուր դարձավ թուր մի զարկեց զքլուխ էրեց էրկու տապակ։

Արուն օր էկավ, փոշմնավ Մահբուբ, սեհրին բդըլավ (խանգարվեց), ըսեց «Վա՞խ, ես ի՞մալ իմ տուն ավրեցի, իմ իրիկ ըսպանեցի»։ Մահբուրն էր, տեսավ էլ չարա չկա, մարթն սպանվեր ա։

Իշավ ձիուց իտոր գլուխ բերեց իրար, գոտով կապեց. Է՛ դեղ չկա, բան չկա ուրին, էտոր կարմիր կապուտ (չուխա) թալեց վրեն ծածկեց, ըսեց. «Ես թորկիմ էրթամ, չելնի՞ ուրիշներ իգան ըսին՝ զարկեց սպանեց»։

Մահբուբ թողեց գնաց ուր պապու քաղաք։ Դառնանք Մահմուդի վրեն։

Մեկ ծանդր բազրկան էկավ էն դհեն։ Բազրկան բաշին դուրբին (դիտակ) գրավ աչիչ, կաշքա, է ֆլան տեխ մե կարմիր բա մի կա։ Կղանչա էրկու մշկու։

— Գացե՛ք, աչքեք ըդի մա՞րդ ա, ջը՞րդա ա, գո՞ղ ա, ի՞նչ ա, աչքեք ու արեք։

Էդ էրկու մարդ կիգան կաչքին, օր մեկ մարդ սպանած ա էդ տեխ, ձին լէ կապուկ հ'ոդի։ Էդ մարդ կդնին վըր ձիուն, կառնին կէրթան։

Բազրկան բաշին կտեսի օր գլուխ շերտած ա, քիչմ լէ սիրտ յարա ա, համա՞ կտրրփա։ Կգեղա։ Լուսումտին կգնա վըր ձիան, կառի կէրթա։ Էրկու իրեք օր կտանի Մահբուբի պապու քաղաք, կտանի ուր ստուն կգնա, իլաչ-դեղ կէնա։

Ուր ախչիկ Գոլշանին կըսա.— Չելնի, մարդ էրթա էդ բրին-դըրի վրեն, հեքիմ էրթա, էդոր հաց տարող լէ տղամարդ էլնի։

Թե տասն օր, թե քսան օր դեղ կէնին, կսաղցուն ըդոր գլուխ։ Գլուխ կսաղնա, սրտի յարեն չսաղնա։ Էն դախ ինչ ա՞խ կէնա, սրտի բրին կթաժանա։

Էն մեկ օր խորոտ, պիտվական Գոլշան խաց կառի կէրթա ըտոր։ Կէրթա, ըտոր յարեն կտեսնի, կըսա.

— Մահմուդ, հ'որի՞ քու գլխու բրին սաղցավ, քու սրտին չը-սաղցավ։ Էդի ո՞ն զանեց քզի բրինդըրեց։

Էլ չըսե, ֆլան ախչիկն ա զարկե, կըսա, «Իմ յարն ա ղարկեց»։

Գոլշան չխասկնա, կըսա.— Յա՞ր չխասկընամ, զարկողի ա-նուն ասա, ես հ'իստակ խասկնամ։

Ըսեց.— Էսա տեսակով Մահբուբն ա ղարկե ընձի, մըկա չըմ գինա դո՞ր ա։

Ըսեց.— Մը վախենա, էրթամ Մահբուբ բերիմ քըզի հեքիմ։

Գոլշան կէրթա Մահբուբի մոտ, դու մ'ըսեր էդքան ժամանակ օր Մահբուբ էկեր ա, Գոլշան ու հ'ինք իրար չտեսած ա։

Մահբուբ ըսեց.— Հայդի բեբախտ, էսքան ժամանակ ա ես էկեր իմ, դու իմ մոտ չէկար։

Ըսեց.— Բեբախտ դու իս։

Ըսեց.— Ես հ'որի՞ բեբախտ իմ։

Ըսեց.— Դու օր բեբախտ չիս, Մահմուդ հ'որի՞ սպանեցիր, Մուզանա սարի գլուխ։

Ըսեց.— Է, ախչի Գոլշան, դու իմա՞լ իմացեր ես օր ես իմ զարկի։

Ըսեց.— Դու չըս գինա՞, ես իմացեր իմ, ես իմացտուն իմ, գինամ։

Էդ օր լսեց, զինք թալեց Գոլշանի օտաց, թե. «Աստծու սիրուն էդի, ընձի ըսա, էդ իմա՞լ դինաաա»։

Ըսեց.— Ախր դու բեբախտ իս, պտի ըսիմ։ Մահմուդ հանտե իմ տան մեջն ա, էդոր բրին հ'մեն սաղցուցեր ինք, մացի սրտի

բրին, էտիկ օր ախ կէնա, սրտի բրին կթաժանա։ Քզի տանիմ էնիմ հեքիմ։

Մահբուբ կուրախնա, կելի գողտուկ կընկնա Գոլշանի հ՝ետեվեն կէրթա։ Էրկու անգամ օր բրին կդեղա, ա՞խ չէնա, բրին կսաղնա, կելնի հ՝առաջի Մահմուդ։

Մահբուբ ըսեց.— Ընձի կիտան ուրիշ մարդու, կըրնաս չարե մի էրա, ընձի ազատե։ Ընձի օր կտանին, իմ մոր գերեզման կա, օր մեռի, ես չգացեր իմ վրեն, դու արի գնա մտի էն տեխ, ես քզի խրատ կիտամ, ես կէրթամ։

Ժամանակն օր էկավ, կխեծուն Մահբուբ կտանին ուրիշ քաղաք, էտոնք կառնին կէրթան, Մահմուդ կէրթա Մահբուբի մոր գերեզմնի վրեն կպախմտի։

Մահբուբն ա, կէրթա օր մամու գերեզման խամբուրա, կտեսնա օր Մահմուդ էն տեխն ա։

Կըսա.— Ես քզի իմացութեն կիտամ, էն քաղաք ինչ ընձի կտանին, իմ քեռու տուն էն քաղաքն ա, դու գնա դեմ իմ քեռու տուն էջի։

Մահբուբն ա՝ կելնի կխեծի ուր ձին, կէրթա։ Խարսնիք կէրթա։ Մահմուդն էլ կդառնա կէրթա Գոլշանի մոտ, կքաշա ուր ձին կխեծի, ուր թուր ու գուրզ կառի կէրթա, կիգա կխասի էդ խարսնըքին։ Կտեսնա օր Մահբուբ խեծուկ ա ձին, խրեր (հյուր) ջրինդ կիտան, կխաղան։ Մահմուդ լէ կէրթա կիգա ջրինդ կիտա, Մահբուբ թամաշա կէնա։

Մահմուդ օր ջրինդ կիտա, կզարկա խրերուց մեկ կսպանա։ Խրեր կքոմին վըր հ՝իրարու, կուզին օրտա զանին Մահմուդին։ Խարսնիքի տեր կասա։

— Բան չկա, ուրախութեն ա, զարկեց, զարկեց։

Էլի կթորկին կէրթան ուրանց ճամբու խետ։ Մահմուդն ա էլի ջրինդ կիտա, կզանա մեկ լէ կսպանա։

Խարսնվորներ բիրադի կքոմին կուզին սպանի, ամա չըն ըշխընա։

Կըսա.—Ախպեր, դու խադա իս, կարիբ մարդ իս, թող գնա քու ճամփու խետ։

Մահմուդն է, կթորկա, կընգի հ՝առեջ կէրթա։ Դեմ կէրթա Մահբուբի քեռու տուն կէջի։ Կտեսնա օր խարսնածն էկավ։

Մահբուբ կըսա.— Ես տեխ չըմ էրթա, ես կէրթամ իմ քեռու տուն կէջիմ։

Դու մըսե, էտոր քեռու տուն ու կեսրանց տուն նըյար (թշնա-

մի) ին, մարդ ա սպանած իրարուց։ Էտոր համար էտոր կեսրեր շատ կուրախնա, կըսա.

— Վոլա մեր խարսի ոտ էկավ վըր մի, մենք դուշման ենք, բարիշինք։

Մահրուր կիջնե ուր քեռու տուն։ Մահբուբ քառսուն օր կուզա օր մարդ չիգա հ'երեան։ Էդ տեխ Մահմուդ կէրթա Մահբուբի մոտ, շորեր կփոխին։ Մահբուբի շորեր Մահմուդ կխագի, Մահմուդի շորեր Մահբուբ կխագի։

Մահմուդ կրսա.— Դու մացիր հ'ոդի, ես կէրթամ փսակվին։

Կտանին էդ տեխ կպսակին։ Կտանին խարս ու փեսեն մըտ իրար։

Խարս կըսա.— Քառսուն ավուր խաց ու ջուր բերեք մըզի, օր քառսուն օր մարդ մըր դուռ չբանա, վըր մզի չիգա։

Հ'իրիկուն ա, տեխ կթալա, փեսեն կըսա Մահբուբին,— Դե արի պառկինք։

Կըսա.— Դու պառկի, ես քու սիրտ մաժիմ, քեֆով կտկլոզնամ կպառկիմ։

Փեսեն կպառկի տեխաց մեջ։ Սիրտ կմաժա, կժղլին, կքաշա փուշախ, կզարկա զէդ կսպանա։ Կէլի դուռ կբանա, կէրթա քեռու տուն։

Քեռին ա, կտեսնի օր տղեն էկավ, Մահբուբ կասա.— Դե խեծի օր էրթանք։

Կըսե.— Դոր կէրթամ, վաղ օր հ'իմցան կելնին կթափին քեռու վրեն, չըմ էրթա։

Էդ Մահբուբն ու Մահմուդ թրխ քեռու տուն քեֆ էնին։ Էկավ քառսուն օր թըմավ։ Էրեցին զիաֆաթ, օր էրթան հարս ու փեսին տեսնին։

Գացին դուռ բացին, տեսան օր խոտ տվե էդ հ'օդի վրեն։ Աչքեցին, տեսան օր զարկած սպանած, նեխեր ա, խոտմ ընկեր ա էդ հ'օդի մեջ օր մարդ չկարնա մտնի ներս։

Բերեցին, ըսեցին, թե ըդի քեռու տան բանն ա. դուշման չէզնի դոսթ։ Էրեցին ասքար ու գացին քեռու տան վերեն։ Ըսեցին. «Էտիկ ձեր բաներն ա, դուք մըր մարդ սպանեցիք, ձեր քոք պտի բերինք»։

Մահմուդ ըսաց.— Մարդ չէրեր ա, ես իմ էրեր, ինչ կըրնաք, ընձի էրեք։

Էկան Մահմուդի վրեն։ Մահմուդ հ'էլավ խեծավ ուր ձին, զարկեց, ինչ էկավ սպանեց, էլ մարդ չթորկեց, մարդու խոտ կտրեց։

Էկավ խեծավ ուր ձին, խաթըր քեռու մոտեն առավ ու Մահ-բուբ էրկուս մեկ տեխ էկան պապու քաղաք։

Գնաց ուր աներոջ տուն։ Մեկ ժամանակմ մնաց էն տեխ։ Պա-պու մոտեն լէ խաթըր առավ ու հ՚ելավ էկավ ուր պապու քաղաք։

Էկավ տեսավ օր ուր իրեք կնիկ օր բերեր ա՝ դրռ տան մեջն են։

Ըսաց.— Էդա մեծ քուր թագավորի տղին, միջնեկ քուր իմ ախ-պոր, պզտիկ լէ՝ ընձի։

Թագավորի տղի խարսնիք էրաց, դարձավ ուր ախպոր խարս-նիք էրաց։

Պզտիկ քուր լէ պսակեց ուր վրեն, ուրախութեն էրաց։

Էն խասավ ուր մուրազին, դու լէ խասնիք ձըր մուրազին։